ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» սեպտեմբերի 2011թ. N---Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Երևան քաղաքի ավագանու վեցերորդ նստաշրջանի առաջին նիստի օրակարգը /կցվում է/։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՕՐԱԿԱՐԳ

1. Օրակարգի նախագծի հաստատում։
2. Երևանի ավագանու 6-րդ նստաշրջանի ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի կազմը հաստատելու մասին։
3. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի հ.3-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին։
4. Գումար հատկացնելու մասին։
5. Գումար հատկացնելու մասին։
6. Երևան քաղաքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար տեղական վճարի 2012 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին։
7. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի N224-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին։
8. Գույք ընդունելու մասին։
9. Երևան քաղաքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն օպերատորների միջոցով իրականացնելու մասին։
10. ՀՀ Երևանի «Կենտրոն» համայնքի Ք. Քուշնարյանի անվան թիվ 10 արվեստի դպրոց», «ՀՀ Երևանի «Կենտրոն» համայնքի Բարսեղ Կանաչյանի անվան թիվ 17 արվեստի դպրոց», «ՀՀ Երևանի «Կենտրոն» համայնքի համայնքի N22 գրադարան» և «ՀՀ Երևանի «Կենտրոն» համայնքի «Մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական դաստիարակության կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների անվանափոխության և դրանց կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու մասին։
11. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին։
12. Երևան քաղաքի սեփականությունը համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին։
13. Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարաններն անհատույց օտարելու մասին։
14. Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին։
15. Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին։

16. «Երևան քաղաքի առևտրի և սպասարկման ոլորտի կազմակերպությունների որակավորման աստիճանների չափորոշիչներն ու շնորհման կարգը սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու 15.03.2011թ. N194-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին։
17. «Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքի մի մասը հետ վերցնելու և այն Լեռնային Ղարաբաղի հանրապետությանը նվիրելու մասին։
18. Երևանի քաղաքապետի 2011 թվականի օգոստոսի 16-ի հ.3719-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին։
19. Գույքը ժամանակավոր տրամադրելու մասին։